ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------» փետրվարի 2013թ. **N----- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Անդրանիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 13.05.2008թ. հ.2277007 վկայական) տարածագնահատման 6-րդ գոտում գտնվող Երևանի Մեծարենցի փողոցի հ.2/8 հասցեում գտնվող 178.0քմ մակերեսով հողամասն Անդրանիկի փողոցին հարող տարածքում, տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 273.84 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Անդրանիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող Երևանի Մեծարենցի փողոցի հ.2/8 հասցեում գտնվող հողամասը փոխանակել Անդրանիկի փողոցին հարող տարածքում գտնվող հողամասի հետ:

Երևանի քաղաքապետի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի հ.1460-Ա որոշման հիման վրա Անդրանիկ Գրիգորյանն աճուրդով ձեռք է բերել Մեծարենցի փողոցի հ.2/8 հասցեում 178.0քմ մակերեսով հողամաս, 2006 թվականի սեպտեմբերի 14-ին կնքվել է հողամասի առուվաճառքի մասին հ.48/5-ԱԳ պայմանագիր, որը ստացել է պետական գրանցում և 13.05.2008թ. տրվել է անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման հ.2277007 վկայականը: Սակայն կառուցապատման աշխատանքներն իրականացնելիս պարզվել է, որ տարածքով անցնում են «Երևան ջուր» ՓԲ ընկերության հաշվեկշռում գտնվող ջրատարները և կոյուղու կոլեկտորը: Նշված խոչընդոտի պատճառով հողամասն իր նպատակային նշանակությամբ հնարավոր չէ օգտագործել և Ա.Գրիգորյանը զրկված է իրեն տրամադրված 178.0քմ մակերեսով հողամասը լիարժեք օգտագործելու հնարավորությունից, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել կատարելու հողամասերի փոխանակություն:

Ստեղծված իրավիճակում խնդրի կարգավորման նպատակով Անդրանիկ Գրիգորյանին առաջարկվել է սեփականության իրավունքով իրեն պատկանող 178.0քմ մակերեսով հողամասը փոխանակել Անդրանիկի փողոցին հարակից տարածքում գտնվող 273.84քմ մակերեսով համարժեք հողամասի հետ (ծածկագիր 01-007-404-001, տող՝ 25272):

Փոխանակման համար քննարկվող հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում:

«Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է քննարկվող հողամասերի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ